ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԲՔԱ-ՆԳ-2022/33 ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՆԻՍՏԻ ՉԿԱՅԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 4-րդ կետի 4.3. ենթակետի համաձայն՝ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր ժամանակավոր բացակայության հիմքի առաջացման օրվան նախորդող առնվազն երկու աշխատանքային օր առաջ հանձնման-ընդունման ակտով մյուս Անձին է փոխանցում տվյալ օրվա դրությամբ չավարտված բողոքարկման և/կամ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա նախաձեռնված ընթացակարգերին վերաբերող փաստաթղթերը, ներառյալ ընդունված, սակայն տեղեկագրում չհրապարակված որոշումները: Ընդունված, սակայն չհրապարակված որոշումները տեղեկագրում հրապարակում է գնումների հետ կապված բողոքներ քննող այն անձը, որին հանձնվել է որոշումը՝ այն ստանալու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Ընդ որում տվյալ օրվա դրությամբ չավարտված բողոքարկման և/կամ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա նախաձեռնված ընթացակարգերի մասով գործերի քննությունը սկսվում է սկզբից: Անձի կողմից սույն կետով նախատեսված կարգով չավարտված բողոքարկման և/կամ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա նախաձեռնված ընթացակարգերին վերաբերող փաստաթղթերը, ներառյալ ընդունված, սակայն տեղեկագրում չհրապարակված որոշումները մյուս անձին փոխանցելու պահից մինչև Անձի ժամանակավոր բացակայության հիմքի վերացումը Լիազոր մարմինը տվյալ Անձին բողոքներ և օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա նախաձեռնված ընթացակարգերին վերաբերող փաստաթղթեր չի տրամադրում:

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարի 130-Ա հրամանի համաձայն Գրիգոր Ներսիսյանի՝ սույն թվականի ապրիլի 11-ից արձակուրդում

գտնվելու հանգամանքը, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի վերը շարադրված ենթակետով սահմանված դրույթը, ԳԲՔԱ-ՆԳ-2022/33 ծածկագրով բողոքը փոխանցվել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանին, հետևաբար «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022թ. ներկայացված բողոքի (պատվիրատու՝ «Ջրառ» ՓԲԸ, ծածկագիր՝ «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20») քննության նպատակով 08.04.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստը չի կայանալու: